

ՈՐՈՇՈՒՄ

30.05.2017 թ.

(արձանագրություն № 15)

Անասնաբուժական բժշկագիտության և անասնաբուծության ֆակուլտետի ղեկանատում և ամբիոններում ուսումնական գործընթացի կազմակերպման վիճակի և բարելավման հիմնախնդիրները

Գիտական խորհուրդը լսելով և քննարկելով „Անասնաբուժական բժշկագիտության և անասնաբուծության“ ֆակուլտետում ուսումնական գործընթացի կազմակերպման և բարելավման հիմնախնդիրների վերաբերյալ ուսումնամեթոդական կենտրոնի ուսումնական գործընթացի վերահսկման, ինքնավերլուծության և որակի կառավարման բաժնի ուսումնասիրությունների և ստուգումների արդյունքների զեկուցումը (զեկուցող՝ Բ.Շահնագարյան) արձանագրում է, որ ֆակուլտետի ղեկանատում և ամբիոններում մեծ ծավալի աշխատանքներ են տարվում ուսումնական գործընթացի բարելավման, դասավանդման որակի բարձրացման, ուսումնամեթոդական և գիտահետազոտական աշխատանքների ակտիվացման, անհարգելի բացակայությունների ու ուշացումների նվազեցման, ուսանողական գիտական խմբակների գործունեության բարելավման, նյութատեխնիկական բազայի ընդլայնման ու արդյունավետ օգտագործման, ուսանողամետ կրթության ներդրման ու իրականացման և ուսման առաջադիմության ու պատրաստվող մասնագետների որակի բարձրացման ուղղություններով:

Գիտական խորհուրդը միաժամանակ արձանագրում է, որ „Կենսաքիմիայի, մանրէակենսաբանության և վիրուսաբանության“ (ամբիոնի վարիչի պաշտոնակատար Գ.Մարմարյան) և „Մորֆոլոգիայի և ախտաբանական անատոմիայի“ (ամբիոնի վարիչ Ն.Գրիգորյան) ամբիոններում առկա են մի շարք թերություններ և բացթողումներ գործավարության, անհրաժեշտ փաստաթղթերի ու առարկայական ծրագրերի առկայության, ուսումնական ծանրաբեռնվածության բաշխման, ուսումնական պարապմունքներին ուսանողների պատշաճ ներկայության ապահովման, ուսանողների հաճախումների հաշվառման, ուսումնամեթոդական գրականության առկայության,

դասախոսական կազմի գիտահետազոտական գործունեության իրականացման, առանձին դասախոսների դասավանդման որակի և ուսանողների գիտելիքների բազմագործոնային գնահատման ու կրեդիտային համակարգի լիարժեք ներդրման ապահովման առումներով:

Նշված ամբիոններում չեն գործում ուսանողական գիտական խմբակներ, բացակայում է կուրատորական աշխատանքը, շատ անելիքներ կան օրացույցային պլանների և աշխատանքային պլանի պատշաճ կազմման ու իրականացման գործընթացում:

Գիտական խորհուրդը արձանագրում է նաև, որ հանձնաժողովի ուսումնասիրությունների արդյունքները ցույց են տալիս, որ „Թերապիայի, ախտորաշարժանության և դեղաբանության“ (ամբիոնի վարիչ Կ.Սուքիասյան) և „Համաճարակաբանության և մակարոնաբանության“ (ամբիոնի վարիչ Հ.Նաղաշյան) ամբիոններում ուսումնական, գիտահետազոտական և խորհրդատվական աշխատանքները կազմակերպվում և իրականացվում են պատշաճ մակարդակով:

Ելնելով վերոնշյալից Գիտական խորհուրդը որոշում է.

1. Ի գիտություն ընդունել անասնաբուժական բժշկագիտության և անասնաբուծության ֆակուլտետում ուսումնական գործընթացի կազմակերպման բարելավման հիմնախնդիրների վերաբերյալ հանձնաժողովների ուսումնասիրությունների արդյունքները:

2. Հանձնարարել ռեկտոր Ա.Թարվերդյանին.

Ամբիոններից ստացված պահանջագրերի հիման վրա, հնարավորության սահմաններում, ամբիոններին ապահովվել ուսումնական գործընթացի իրականացման համար անհրաժեշտ նյութատեխնիկական միջոցներով և „Կենսաքիմիայի, մանրէակենսաբանության և վիրուսաբանության“ ամբիոնում ձևավորել համապատասխան տեխնիկական միջոցներով կահավորված լսարան:

3. Հանձնարարել ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Յու.Մարմարյանին, ուսումնամեթոդական կենտրոնի տնօրեն-պրոռեկտոր Ս.Դավեյանին

3.1 Ֆակուլտետի դեկանի (Ա.Վարդանյան) և Որակի վերահսկման հանձնախմբի (Բ.Շահնազարյան) հետ համատեղ վերահսկողություն սահմանել դեկանատում և

ամբիոններում պատշաճ գործավարություն և փաստաթղթաշրջանառության իրականացման, ֆակուլտետում աշխատանքային կարգապահության հաստատման, ուսանողների հաճախումների բավարար մակարդակ ապահովելու, կրթական ժամանակակից տեխնոլոգիաների ու դասավանդման նոր մեթոդների ներդրման և կրեդիտային ու ուսանողների գիտելիքների գնահատման բազմագործոնային համակարգերի լիարժեք իրականացման ուղղություններով:

4. Հանձնարարել „Անասնաբուժական բժշկագիտության և անասնաբուծության” ֆակուլտետի դեկան Ա.Վարդանյանին.

4.1 Կրթության որակի բարձրացման նպատակով ամբիոնների վարիչների հետ համատեղ աշխատանքներ տանել ուսումնական գործընթացի կատարելագործման, կրթական նորագույն տեխնոլոգիաների ներդրման, ուսանողների գործնական հմտությունների զարգացման և պատրաստվող մասնագետների որակի սահմանված կրթական վերջնարդյունքներին համապատասխանության ապահովման ուղղությամբ:

4.2 Ամբիոնի վարիչների հետ համատեղ անհրաժեշտ աշխատանքներ տանել ֆակուլտետի ամբիոններում պահպանվող փաստաթղթերի պահանջվող մակարդակով ձևավորման ու գործավարության իրականացման նկատմամբ և մեկ ամսյա ժամկետում կարգավորել դեկանատի և ամբիոնների գործավարությունը և ապահովել փաստաթղթերի առկայությունն ու պատշաճ փաստաթղթաշրջանառությունը:

4.3 Օպերատիվ կերպով քննարկել ֆակուլտետի և ամբիոնների գործունեության մեջ տեղ գտած թերությունները, քննարկել ֆակուլտետի գիտական խորհրդում, ներկայացնել համապատասխան առաջարկություններ և իրականացնել դրանց վերացման և ուսումնական գործընթացի բարելավման համար անհրաժեշտ միջոցառումներ:

4.4 Համատեղ աշխատանքներ տանել ամբիոններում ուսումնամեթոդական, գիտական, կուրատորական աշխատանքների և ՈՒԳԽ գործունեությունը ակտիվացնելու ու համապատասխան մակարդակի բարձրացնելու ուղղությամբ:

5. Հանձնարարել ամբիոնների վարիչներին.

5.1 Ամբիոններում իրականացնել պատշաճ գործավարություն, ուժեղացնել հսկողությունը աշխատանքային կարգապահության և հաճախումների հաշվառման

նկատմամբ, նվազագույնի հասցնել անհարգելի բացակայություններն ու ուշացումները, ապահովել ուսանողների հաճախումների պատշաճ մակարդակ և սահմանված կարգով իրականացնել բաց թողած դասերի լրացումները:

5.2 Հատուկ ուշադրություն դարձնել ուսումնաարտադրական պրակտիկաների նպատակային և արդյունավետ անցկացման, ուսանողների գործնական գիտելիքների ձեռքբերման ու հմտությունների զարգացման և անհրաժեշտ կրթական վերջնարդյունքների ձևավորման ու կրթական բարեփոխումների իրականացման հարցերին:

5.3 Հանձնարարել „Մորֆոլոգիայի, ֆիզիոլոգիայի և ախտաբանական անատոմիայի“ ամբիոնի վարիչ Ն.Գրիգորյանին և „Կենսաքիմիայի, մանրէակենսաբանության և վիրուսաբանության“ ամբիոնի նորանշանակ ամբիոնի վարիչ Գ.Մարմարյանին մեկ ամսյա ժամկետում օպերատիվ կերպով շտկել ամբիոնում առկա թերություններն ու բաց թողումները և ամբիոններում իրականացնել պատշաճ ուսումնական գործընթաց:

Գիտ. խորհրդի նախագահ՝

*Ա. Ս. Երվանյան* / Ա. Պ. Թարվերդյան

Գիտ. քարտուղար՝

*Գրիգորյան* / Դ. Ս. Բալասանյան